Ճարճակիս

Մակերես՝ 23.16կմ^2

Բնակչություն՝ 470

Գյուղ Արագածի տարածաշրջանում, մարզկենտրոնից գտնվում է 48կմ հեռավորության վրա: Նախկինում ունեցել է Դերեք, Ճարճակես, Ճարճարիս, Ջարջառիս անվանումները: Դերեկ է վերանվանվել 1978 թ-ին: Դերեկ եզդերենից թարգմանաբար նշանակում է՝աղբյուր՝:
Գյուղի շրջակայքում կան 5-րդ դարում կառուցված եկեղեցու ավերակներ:
Գյուղը տեղադրված է Փամբակի լեռնաշղթայի լանջին, Ջարջառիս գետի վերին հոսանքում: Գյուղը գտնվում է ծովի մակարդակից 2180 մ բարձրության վրա: Կլիման բարեխառն լեռնային է: Ձմեռները տեիական են, ցուրտ, հաստատուն ձնածածկույթով: Ամառները տաք են, համեմատաբար խոնավ: Հուլիսյան միջին ջերմաստիճանը տատանվում է 16-18-ի սահմաններում, հունվարյանը՝ -6,-8-ի սահմաններում: Մթնոլորտային տարեկան տեղումների քանակը 450-600 մմ: Բնական լանդշաֆտները սեւահողային տափաստաններ են:
1873 թ-ին գյուղն ունեցել է 441, 1959 թ-ին՝ 512, 1970 թ-ին՝ 631, 1979 թ-ին՝ 579 բնակիչ: Համայնքի բնակչությունը կազմում է 512 մարդ, որից 47%տղամարդիկ են, 53%՝ կանայք: Բնակչության մեջ մինչաշխատունակները կազմում են 20%, աշխատունակները՝ 70%, հետաշխատունակները՝ 10%:Գյուղն ունի 110 տնտեսություն
Ունի դպրոց, գրադարան, կապի հանգույց:
Համայնքի տնտեսության մասնագիտացման ուղղությունը գյուղատնտեսությունն է:
Գյուղատնտեսական հողահանդակների հիմնական մասն օգտագործվում է որպես վարելահողեր, խոտհարքեր: Զբաղվում են բանջարաբոստանային, հացահատիկային, կերային կուլտուրաների մշակությամբ: Տնամերձ հողակտորներում կան բազմամյա տնկարկներ: Պահուստային հողերը զբաղեցնում են համայնքի մակերեսի 75%, որոնց մեջ ամենամեծ բաժինը ունեն արոտավայրերը՝ 466 հա, վարելահողերը զբաղեցնում են 188հա, խոտհարքերը՝ 8 հա: Զբաղվում են խոշոր եւ մանր եղջերավոր անասնաբուծությամբ:
Արդյունաբերություն չունի:
Համայնքի հիմնախնդիրների մեջ կարեւորվում է ոռոգման ջրի ջրագծերի, գյուղամիջյան ճանապարհների վերանորոգումը: